

հաստան, 1830, Վենետիկ, էջ 201) թէ տեղւոյն ժողովրդապետ Հ. Աղեքսանդր Ինճիճեանի օրով «ժողովուրդն կրթութեամբ եւ ուսմամբ՝ պանծալի եղև առաջի օտարաց»:

Շատ հաւանական է որ ինչպէս Ձիք-Սիր-վիդի, նոյնպէս Թրանսիլվանիոյ ուրիշ քաղաքներու հայերը իրենց տղաքը յաճախ կը զրկէին Կեդրա եւ Եդիսարէթուպոլիս ուսում առնելու: Այս վերջին երկու քաղաքներուն մէջ երբեմն աչքան բարգաւաճ էին հայ դպրոցները, որ օտարներ անգամ կը յաճախէին հոն: Տոքթ. Ձիչօ-Փօփ, ուսմէն երեսփոխնական ժողովի աշխատ նախագահը, Կեդրայի հայ դպրոցին մէջ առած է իր նախնական ուսումը:

**ԱՔՔԻՐՄԱՆԻ ՄԷՁ**

Աքքէրման ալ երբեմն իր դպրոցը ունեցած է:

Մասեաց Աղանի (1864, էջ 108) խօսելով Աքքէրմանի դպրոցին մէջ տօնուած Վարդանանց հանդէսին մասին կ'ըսէ.

«Աքքէրմանի ժողովրդական դպրոցը Պեսարապոյ ուրիշ ամէն քաղաքներուն դպրոցներէն աւելի ծաղկեալ ու յառաջադէմ վիճակի մէջ է՝ Աստուածատրեան եղբարց բարեպաշտական եւ ազգասիրական ջանքովը, որ Դպրոցին նիւթական շէնքին եւ ներքին բարեկարգութեանը համար շատ տարի աշխատած են ու կ'աշխատին զանազան դժուարութեանց յաղթելով...: Երկու ժամի չափ տեւեր է հանդէսը, եւ ժողովուրդը լի յուսով եւ ուրախութեամբ յայտնելով իրենց շնորհակալութիւնը Մեծարոյ հողաբարձուներուն նմանապէս եւ բարեջան ու խաղաղասէր վարժապետներուն՝ զարձեւ եւ իրենց տեղերը, տարակոյս չունենալով որ այն Դպրոցին 65 աշակերտները քիչ ժամանակէն Աքքիրմանի ժողովրդեան մեծ յառաջդիմութեանը եւ լուսաւորութեանը պատճառ պիտի լինին: Արդէն այն քաղաքին մէջ որ հասարակաց լեզուն տաճկերէնն է, այժմ դպրոցի աշակերտներուն համարձակ կերպով հայերէն հասկնալովն ու խօսելովը սկսած է նաեւ աներուն մէջ հայերէն լեզուն մտնելը»:

Աքքէրմանի մէջ (Ձէթաթէ-Ալլա) հիմա այդ դպրոցին հետքն իսկ չկայ...:

**ՁԷՐՆՕՎԻԳԻ ՄԷՁ**

Ձէրնօվիցի մէջ, աւստրիական տիրապետութեան տակ, հայերը երբեմն ունեցած են իրենց դպրոցը: Ան կը գտնուէր հայ կաթոլիկ եկեղեցիէն քանի մը քայլ հեռու, Հայկական փողոցի վրայ, եւ 1879-ին հիմնուած էր Գասպարովիչ կաթոլիկ հոգեւորականին կողմէ: Գիշերօթիկ էր, եւ հոն կը յաճախէին ոչ միայն Պուքովինայէն եւ Կալիցիայէն, այլ նաև ոտնակա Պեսարապոյէն աշակերտներ: Դպրոցը կը գտնուէր կաթոլիկ հոգեւորակութեան հսկողութեան տակ, եւ կրօնական բնոյթ կը կրէր իր տուած կրթութիւնը: Դպրոցի անունն էր «Հայ Կաթոլիկ Արքեպիսկոպոսական Իսահակեան վարժարան» եւ իր աշակերտներուն մեծ մասը ազգատ ծնողներու զուակներ էին, որոնց ծախքերը մեծ մասամբ կը հողար Ձէրնօվիցի կաթոլիկ համայնքը:

Հիմա դպրոցի հետքն իսկ չկայ Ձէրնօվիցի մէջ:

**ՊԱՔՈՎԻ ՄԷՁ**

Կարճ տեւած է Պաքովի հայ դպրոցը՝ հալլել քանի մը տասնեակ տարի: Եաշէն ու Ռոմանէն վարակուած՝ Պաքովն ալ փորձը քրած է դպրոց ունենալու: 1858-ի Մասեաց Աղանիներուն մէջ հանդիպեցայ Սողոմոնթրանխոլեանի մէկ թղթակցութեանը, որ կ'ըսէ թէ Պաքովի «տաճարին բակին մէջ մանչ տղոց համար նորակառոյց վարժարան մը կայ, որ այժմեան ժողովրդեան միջակ թուոյն համեմատ (60 ընտանիք) մէջը առայժմ բաւական ուսանողք կը գտնուին»: Չեմ կարծեր որ այս դպրոցը 1868-էն յետոյ դոյութիւն ունեցած ըլլայ:

**ԹՐԿՕ-ՕՔՆԱՅԻ ՄԷՁ**

Անշուք հայութիւն մը կայ հիմա հոս ու անշուք եկեղեցի մը: Բայց այս քաղաքն ալ, ատենին, իր դպրոցը ունեցած է: 1847-ին Եաշ տպուած յայտարարութեան մը մէջ կը յիշուի թէ հոս եւս կը գտնուէր «պատրաստողական վարժարան մը հայոց տղայոցը համար»: Այլուր հանդիպած եմ յիշատակութեանը Մկրտիչ Սահակեան անուն ուսուցչի մը, որ Եաշ ուսած էր եւ որ դաստիարակի պաշտօն վարած է ատեն մը Թրկօ-Օքնայի մէջ: